

Կարանտինը որպես պատուհաս կամ տնային ուսուցում

Թվում էր, թե երեխաների տանը մնալը, միշտ իրար կողքի լինելը պետք է երանուլթյուն լինի: Ո՞ր մի ծնողը չի ուզե՞նա իր երեխային ավելի երկար տեսնել: Ու, միգուցե, երևի ավելի երանելի բան չկա, քան մեկ երեխայի հետ մնալ տանը, պատրաստել դասերը, զբաղվել երեխայի հետ:

Բայց երեք երեխայի հետ այդ երանուլթյունը վերածվում է գերհագեցած օրվա, որի ընթացքում չգիտես ինչը ոնց անես, որ հասցնես համ երեխայի հետ դասապատրաստում անել, համ տան հոգսերը հոգալ, համ էլ սեփական աշխատանքովդ զբաղվել: Այդ ամենը բարդանում է նաև նրանով, որ երեխաներից մեկը կամակոր է ու ոչ մի կերպ չի ուզում ենթարկվել քեզ:

Ունեմ Կրթահամալիրում սովորող երեք երեխա, որոնք սովորում են առաջին, երրորդ և հինգերորդ դասարաններում: Հաճախում են Հարավային դպրոց-պարտեզ: Ինքս աշխատում եմ տանը՝ համատեղելով աշխատանքը տնային տնտեսուհու աշխատանքի հետ: Քանի դեռ աշխարհը չէր խառնվել իրար, երեխաները հաճախում էին դպրոց, և իրենց բացակայության ընթացքում հասցնում էի անել գործերս: Հիմա դպրոցը տեղափոխվել է տուն: Այստեղ ես և՛ ուսուցիչ եմ, և՛ մայրիկ, և՛ տնային տնտեսուհի, և՛ աշխատող կին: Այս ամենի հետ միաժամանակ փորձում եմ աչքաթող չանել նաև կայքս՝ Փոքրիկ.am, որը, հատկապես այս օրերին, օգնում է ծնողներին՝ իրենց երեխաներին զբաղեցնելու գործում:

Բարեբախտաբար, տեխնիկայի պակասության խնդիր չունենք: Երեխաներն ապահովված են համակարգիչներով: Բնակարանը երեք սենյականոց է. յուրաքանչյուր երեխա ունի իր «դասասենյակը», իսկ ծնողները դասի ժամերին զրկված են ազատ տեղաշարժի իրավունքից, հեռախոսազանգերին պատասխանելու հնարավորությունից, որը սերտ կապված է սեփական աշխատանքի հետ: Այսինքն, տվյալ դեպքում տուժում է աշխատանքը: Բայց երեխաների ուսուցումը մեզ համար առաջնահերթ է: Մենք մեր գործատուների հետ կխոսենք գրավոր զրուցարանների օգնությամբ, մեր աշխատանքները կանենք գիշերային ժամերին:



Կորյուն



Աստղիկ



Տրդատ

Արտակարգ դրուժյան առաջին օրերին տեսազանգերով դասապատրաստումը խառնաշփոթ էր հիշեցնում: Մեծ տղայիս դասընկերները փորձում էին teams-ի ծրագրով միանալ ուսուցչին: Ծրագիրը շատերի մոտ խնդիր առաջացրեց: Տղաս հերթով փորձեց օգնել ընկերներին՝ հեռակա միանալով իրենց համակարգիչներին: Ի վերջո իրենց հեռակա դասարանը կազմավորվեց ու ընկալ հունսի մեջ:

Մյուս երկու զավակներիս տեսազանգերը իսկաբանե կազմակերպվում էին

Zoom ծրագրով, որն էլ իր թերություններն ունի՝ ժամանակի սահմանափակում, երբեմն թարմացումների հետ կապված կապի խափանում և այլն: Սրան էլ համակերպվեցինք:

Հիմա արդեն կա տեսազանգերի կարգավորված ժամանակացույց: Ամեն շաբաթ ցուցակը թարմացնում և աչքիս առաջ եմ փակցնում, որպեսզի հանկարծ դաս բաց չթողնենք: Շատ դեպքերում 3 տարբեր դասարանների տեսազանգերը հաջորդում են իրար և միայն առավոտյան ու երեկոյան է հնարավոր լինում միասին սեղան նստել: Այդ ընթացքում պետք է զբաղեցնել փոքրիկ, որ չխանգարի մեծերին, կամ էլ՝ հակառակը: Սակայն երբեմն, ակամա, չխանգարելը չի ստացվում:

Արդեն ընկել ենք հունի մեջ: Օրվա տարբեր ժամերի՝ մինչև երեկոյան 5-ը տեսազանգեր են իրար հաջորդում: Դրանից հետո սկսվում է տևալիս հանձնարարությունները կատարելու ժամանակը, որն ավելի դժվար է իմ պարագայում: Փոքրս դեռ նոր է դառնում տառաճանաչ, պետք է իր հետ առանձնահատուկ պարապել, որպեսզի ամեն ինչ ճիշտ ընկալի: Միջնեկս՝ աղջիկս, բնավորությամբ շատ կամակոր է ու իրասածի: Եթե հավես չունեցավ, նույնիսկ իր լավ իմացածը կասի չեմ հասկացել ու մենք իրեն չենք կարողանա համոզել հակառակը: Երկար «պատերազմից» հետո միակ լուծումը մնում է. «Գրիր ընկեր Անահիտին, թող բացատրի»: Մեծ տղայիս պարագայում մի քիչ բախտը ժպտացել է: Եթե մաթեմատիկան չի հասկանում, զանգում է տատիկին (տատիկը մաթեմատիկայի ուսուցչուհի է եղել): Մյուս դասերը հիմնականում ինքնուրույն է անում:

Ու այստեղ մնում է ամենամեծ խնդիրը՝ տեսանյութերը: Երեխաները տարբեր տարիքային խմբերում են, հետևաբար տեսանյութերի բովանդակությունը տարբեր է: Եթե բախտը ժպտում է, ու թեման այնպիսին է, որ հնարավոր է երեքը մեկում անել, թեթևացած շունչ եմ քաշում ու անցնում գործի: Իսկ եթե տարբեր բովանդակության առաջադրանքներ են, փորձում եմ այնպես անել, որ շաբաթական գոնե երկուական տեսանյութ ունենան երեխաները: Շատ դեպքերում դա էլ չեմ հասցնում:

[«Երգում է Գաբոյան անսամբլը» կամ «Ձեզ բարեկենդան, մեզ բարի գառիկ...»](#)

[«Չատկածառ»](#)

«Բակային խաղեր»

Բլոգավարության տեսակյունից բախոր ժպտացել է ինձ: Ինքս լինելով մասնագետ, երեխաներին վաղուց եմ սովորեցրել ճիշտ վարել իրենց բլոգը, ինչպես նաև շատ այլ մանրուքներ: Եվ ներկայիս հեռավար ուսուցման պարագայում, երբ բլոգը կարևոր նշանակություն ունի, երեխաներս հաղթանակով են դուրս գալիս այս ճակատամարտից:

Կորյունի բլոգը

Աստղիկի բլոգը



Արտակարգ դրությունը դրական կողմ էլ ունի: Երեխաներն իրար հետ ավելի են մտերմացել: Օգնում են իրար, երբ ազատ են ու եթե կարողանում են: Տնային առաջադրանքների դասապատրաստմանը ամենաշատ ժամանակը հատկացնում եմ կամակոր գեղեցկուհուս՝ Աստղիկին: Այդ ընթացքում մեծ եղբայրը փոքր եղբորն օգնում է սերտել հերթական բառը, որ անցել են, կարդալ փոքր տեքստեր կամ այլ առաջադրանքներ կատարել: Նրանց տարիքային տարբերությունը 5 տարի է: Առաջ

հազվադեպ կարելի էր տեսնել, որ երկու եղբայր իրար հետ լեզու գտնեն: Միշտ կապող օղակը Աստղն էր: Իսկ հիմա, երբ Աստղը տեսագանգի է, կամ տևային առաջադրանքներով է զբաղված, Կորյունը Տրդատի հետ հավեսով զբաղվում է կամ խաղում: Օրինակ, վերջերս, Կորյունի առաջադրանքը սովորական կոտորակների գումարում-հանում էր: Կորյունը ընդհանուր հայտարարի էր բերում, ու համարիչների հետ կատարվող գործողությունը տալիս Տրդատին՝ որպես առաջադրանք: Կամ հակառակը, Տրդատը, իր դասերն ավարտած, նստում է եղբոր կողքը ու ժամ պահում, որ նա արագ դասերը անի:

Հիմա եմ հասկանում երեխաների ուրախությունը, երբ դասերով հագեցած շաբաթից հետո գալիս էին հանգստյան օրերը: Այժմ ինքս եմ անհամբեր սպասում այդ շաբաթ-կիրակի օրերին, հաշվում մայիսյան ոչ աշխատանքային օրերը: Այդ օրերը մասամբ իմ հանգստյան օրերն են լինելու, քանի որ գոնե այդ օրերին դադարելու եմ լինել ուսուցիչ ու մնալու եմ տևային տնտեսուհի, աշխատող կին ու պարզապես մայր, ով երեխաներին անընդհատ հիշեցնելու է առաջադրանքներն անել:



Ուռա՛



Ժպտացեք

Հասկանում եմ, որ այս ուսումնական տարին ամփոփելու ենք տևալին հեռավար ուսուցմամբ: Գիտեմ, որ դեռ մի ամբողջ դժվար ամիս է ինձ սպասվում: Բայց հուսով եմ, որ մեր այս գրկանքները ի վերջո հանգեցնելու են նրան, որ կորոնավիրուս կոչված չարիքը աստիճանաբար թուլացնի իր ճիրանները:

Առողջութուն բոլորիս: